ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ ԵՎ ՆԿԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ
СООБЩЕНИЯ И ЗАМЕТКИ

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍՈՎԵՏԱՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Պատմ. գիտ. դոկտոր Խ. Հ. ԲԱՐՍԵՂՅԱՆ

Հայրենական մեծ պատերազմի պատմության գիտական մշակումը, Սովետական Հայաստանի աշխատավորության՝ պատերազմին ունեցած մասնակցության լուսաբանությունը արժանի տեղ է գրավում սովետահայ պատմագրության մեջ։ Այդ հարցի լուսաբանության համար աղբյուրագիտական կարևոր նշանակություն ունեն պարբերական մամուլը, պատերազմի ժամանակ ռազմաճակատի տարբեր հատվածներում հայերեն լեզվով լույս տեսած զինվորական թերթերը։ «Մարտական գրոհ» (Ղրիմի ռազմաճակատ), «Հայկական սնայպեր» (Կեր.), «Հայրենիքի փառքի համար» (Հարավային ռազմաճակատ), «Առաջ, դեպի հաղթանակ» (Հյուսիսային Կովկասյան ռազմաճակատ), «Դեպի թշնամու ջախջախումը» (Բրյանսկի ռազմաճակատ), «Բանվորա-գյուղացիական կարմիր բանակի մարտիկ» (հետագայում՝ «Լենինյան դրոշով», Անդրկովկասյան ռազմաճակատ), «Առաջ, հանուն հայրենիքի» (Հյուսիսային Կովկասյան ռազմաճակատ), «Կարմիր զինվոր» (89-րդ հայկական ռամանյան դիվիզիա), «Հանուն հայրենիքի» (Հյուսիսային Կովկասյան զինվորական խումբ), «Մարտական դրոշ» (409-րդ հայկական հրաձգային դիվիզիա), «Սովետական ռազմիկ» (III Ուկրաինական ռազմաճակատ), «Սուվորովական» (II Մերձբալթյան ռազմաճակատ), «Մարտ հանուն հայրենիքի» (408-րդ հայկական դիվիզիա), «Մարտական աստղ» (45-րդ բանակ), «Կարմիր բանակի ագիտատորի բլոկնոտ» (Կարմիր բանակի գլխքաղվարչություն). «Մարտական կադրեր» (Անդրկովկասյան ռազմաճակատ),— ահա հայերեն այն թերթերը, որոնք լույս են տեսել 1941—1945 թթ.։ Այդ թերթերը պատմում են ռազմաճակատի տարբեր հատվածներում հայ և Սովետական Միության մյուս ժողովուրդների դյուցազունների խիզախության և արիության մասին։

Անցած ժամանակաշրջանում բացի թարգմանական գրականությունից հայերեն լեզվով հրատարակվել են մենագրություններ, դրքեր, բրոշյուրներ, ժողվածուներ, հոդվածներ։ Նրանցում պատկերված են պատերազմական գործողությունները, հայ ժողովրդի ունեցած մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին, ցույց են տրված կարմիր բանակի հայկական առանձին զորամիավորումների, դիվիզիաների մարտական գործողությունները, հայ պարտիզանների պայքարը, Եվրոպայի երկրների օկուպացված շրջանների ժողովուրդների դիմադրական շարժմանը հայերի ցուցաբերած մասնակցությունը, թիկունքի հերոսական աշխատանքը, պատերազմի ժամանակ սովետական հայրենիքի պաշտպանությանը սփյուռքահայերի ցույց տված օգնությունը։ Նման աշխատությունների ստեղծման գործում որոշակի գեր են կատարել Հայկական ՍՍՌ ԳԱ պատմության ինստիտուտը և ՍՄԿՊ ԿԿ-ին կից մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական ֆիլիալը։ Պատմության ինստիտուտի Հայրենական մեծ պատերազմի պատմության կաբինետը խնամքով հավաքել և մշակել է պատերազմին Սովետական Հայաստանի և նրա զավակների ունեցած մասնակցությունն արտացոլող նյութեր, վավերագրեր, լուսանկարներ։ Պատերազմի շրջանում և նրան հաջորդած առաջին տարիներին հրատարակված աշխատությունների մեծ մասը նվիրված է մարտական գործողություններին, ռազմաճակատում առավել աչքի ընկածների արիության և խիզախության նկարագրությանը, ռազմաճակատում գտնվող իր զավակներին հայ ժողովրդի տված պատվիրանին և նրա կատարմանը։

1941—1945 թթ. Հայրենական մեծ պատերազմին հայ ժողովրդի ցուցաբերած մասնակցությունը լուսաբանություն է ստացել նավատորմի ծովակալ Հովհաննես Իսակովի «Հայ ծովայինները Հայրենական մեծ պատերազմում»[1] արժեքավոր աշխատության մեջ։ Հենվելով արխիվային

---

1 Նավատորմի ծովակալ Ի. Ս. Իսակով, Հայ ծովայինները Հայրենական մեծ պատերազմում, Երևան, 1946։

և պարբերական մամուլում հրապարակված նյութերի վրա, հեղինակը ցույց է տվել Հայրենական պատերազմի տարիներին սովետական ռազմա-ծովային նավատորմի շարքերում գերմանա-ֆաշիստական զավթիչների և ճապոնական միլիտարիստների դեմ մարտնչած հայ ծովայինների սխրանքները։ Հետագայում Հ. Իսակովը մի շարք ուշագրավ ակնարկներ է գրել պատերազմում հայ ռազմիկների ունեցած մասնակցության մասին։ Պատմագրական տեսակետից արժեքավոր է Ա. Մալխասյանի «Սովետական բանակի հայ գործիչները» գրքի առաջին հրատարակության առթիվ Հ. Իսակովի գրած «Առաջարանը»։ Նրանում ռազմական արվեստի մեծ գիտակը ոչ միայն գրվատում է հեղինակի շնորհակալ աշխատանքը, այլև մի շարք օգտակար ընդհանրացումներ է անում։

Ա. Մնացականյանի «Հայ ռազմիկների հերոսության տարեգրությունները», «Հայ ժողովուրդը Հայրենական մեծ պատերազմում» և այլ մենագրություններում ու հոդվածներում[2] բացի երկրորդ համաշխարհային պատերազմի ծագման և բնույթի հետ կապված ընդհանուր հարցերի քննարկումից, հանգամանորեն ցույց են տրված Հայրենական մեծ պատերազմին հայ ժողովրդի ունեցած մասնակցությունը, ռազմաճակատային հայ պարբերական մամուլի գործունեությունը, Հայաստանի կոմպարտիայի պատերազմական տարիների բեղմնավոր աշխատանքը ռազմաճակատում և թիկունքում հաղթանակը կոփելու համար։ Ա. Մնացականյանը սովետահայ պատմագրության մեջ առաջինն է լայն ֆոնի վրա լուսաբանել Սովետական Հայաստանի՝ Հայրենական պատերազմի ժամանակաշրջանի պատմությունը։ Հեղինակը իր աշխատություններում հատուկ տեղ է հատկացրել պատերազմի ժամանակ սփյուռքահայ առաջավոր կազմակերպությունների գործունեությանը, մերկացրել է դաշնակցության ռեակցիոն քաղաքականությունը։ Իհարկե, Ա. Մնացականյանի վերոհիշյալ գրքերում կան առանձին անճշտություններ, վիճելի տեղեր և նույնիսկ վրիպումներ, բա՛ց ամբողջությամբ վերցրած դրանք հարստացրել են սովետահայ պատմագրությունը և որոշակի դեր խաղացել Հայրենական պատերազմի պատմության մշակման ասպարեզում.

Հայրենական մեծ պատերազմի պատմագրության մեջ հատուկ տեղ ունեն կոմունիստական պարտիայի և նրա տեղական ջոկատների գործունեությանը նվիրված աշխատությունները։ Պատերազմը հաղթականորեն ավարտվելուց հետո պահանջ էր զգացվում ուսումնասիրել և ընդհանրացնել ռազմաճակատի և թիկունքի պարտիական կազմակերպությունների ծավալած գաղափարական, պարտիական-քաղաքական աշխատանքի ձևերն ու մեթոդները, ցույց տալ առաջավոր կոմունիստների սխրանքները։ Այդ հարցերին են նվիրված Վ. Զաքարյանի, Ա. Հարությունյանի և այլոց թեկնածուական դիսերտացիաներն ու հոդվածները[3]։ Վ. Զաքարյանի աշխատությունը նկարագրում է Հայաստանի կոմպարտիայի գործունեությունը 1941—1945 թթ.՝ «Ամեն ինչ ռազմաճակատի համար», «Ամեն ինչ հաղթանակի համար» մարտական կոչերը իրականացնելու ուղղությամբ։ Մայրաքաղաքի պարտիական կազմակերպության առաջատար դերի, արդյունաբերական ձեռնարկությունների պատերազմական շրջանի լարված աշխատանքների մասին է պատմում Ա. Հարությունյանը իր գրքում։ Ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության պատերազմական տարիների վիճակը քննարկված է Հ. Թումանյանի «Հայկական ՍՍՌ էկոնոմիկան Հայրենական պատերազմի տարիներին և նրա զարգացումը հետպատերազմյան առաջին հնգամյակում» փաստաթղթերում մենագրությունում և «Սովետական Հայաստանի տնտեսական զարգացումը 1920—1960 թթ.» կոլեկտիվ աշխատությունում։

---

2 Ա. Մնացականյան, Հայ ռազմիկների հերոսության տարեգրությունները, Երևան, 1947. Մոսկվայի հայ պաշտպանները, Հայկական ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1948, № 1. Կովկասի հերոսական պաշտպանությունը, Հայկական ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1948, № 12. Հայ ռազմիկների մասնակցությունը ֆաշիստական Գերմանիայի վերջնական ջախջախման համար մղված մարտերին, Հայկական ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1949, № 9. Սովետական բանակի մղած մարտերը ճապոնական զավթիչների դեմ և հայ ռազմիկների մասնակցությունը այդ մարտերին, Հայկական ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1949, № 10. Հայ ժողովուրդը Հայրենական մեծ պատերազմում, Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատարակչություն, 1954. Սովետական Հայաստանը Հայրենական մեծ պատերազմի ժամանակաշրջանում, դոկտորական դիսերտացիա, երկու մասից, մաս առաջին, 303 էջ. մաս երկրորդ, 342 էջ և այլն։

3 Տե՛ս Վ. Զաքարյան, Հայաստանի կոմունիստական պարտիան Հայրենական մեծ պատերազմի ժամանակաշրջանում. Ա. Հարությունյան, Երևանը Հայրենական մեծ պատերազմի տարիներին, Երևան, 1958 և այլն։

Հայրենական մեծ պատերազմին հայ ժողովրդի ցուցաբերած մասնակցությունն իր արտացոլումն է գտել Մ. Ազայանի և Ե. Խալեյանի «Ուրվագծեր Սովետական Հայաստանի պատմության», «Հայաստանի կոմունիստական պարտիայի պատմության ուրվագծեր» գրքերում և «Մեծ հոկտեմբերի դրոշի ներքո», «Հայ ժողովրդի պատմություն» կոլեկտիվ աշխատություններում, Խ. Մոմջյանի «Հայ ժողովրդի զավակները սովետական հայրենիքի համար մղված մարտերում» և այլ գործերում[4], Ս. Խարմանդարյանի «Հայ ժողովրդի մարտական համագործակցությունը Սովետական Միության ժողովուրդների հետ Հայրենական մեծ պատերազմում»[5] աշխատությունը պատկերում է մեր երկրի ժողովուրդների լենինյան բարեկամությունը և համագործակցությունը պատերազմի տարիներին, ցույց է տալիս գերմանա-ֆաշիստական դավթիչների ջախջախման գործում սովետական հայրենասիրության և սոցիալիստական ինտերնացիոնալիզմի հզոր ուժը։

Առանձին ուսումնասիրություններ և հոդվածներ են հրատարակվել Հայրենական պատերազմին Հայաստանի կոմերիտականների և կանանց ցույց տված մասնակցության մասին[6]։

Առանձին աշխատություններ նվիրված են պարտիզանական և դիմադրական շարժման հայ մասնակիցների պայքարին։ Հիշատակության արժանի են Ուկրաինայում գործած Ա. Ի. Միկոյանի անվան հայ պարտիզանական ջոկատի գործողությունների և Ֆրանսիայի կոմպարտիայի անդամ պոետ Միսակ Մանուշյանի մասին Ե. Խալեյանի գրած աշխատությունները, Տ. Դրամփյանի՝ «Ֆրանսիայի կոմպարտիայի հայկական սեկցիայի գործունեությունը դիմադրական շարժման տարիներին (1941—1944)» թեմայով գիտական հանդեսներում հրապարակած հոդվածները[7]։

Ս. Հարությունյանի «Ռազմաճակատի այն կողմում» հուշապատումը նվիրված է Կովպակի պարտիզանական դիվիզիայում գործած հայկական «Հաղթանակ» ջոկատի մարտական գործունեությունները։

Վերջերս լույս տեսավ Մ. Հակոբյանի «Անհայտ կորած մարդիկ»[8] վավերագրական աշխատությունը, որը մի յուրատեսակ հերոսապատում է պատերազմի ժամանակ գերված մի շարք

[4] Տե՛ս Մ. Ազայան, Ե. Խալեյան, Ուրվագծեր Սովետական Հայաստանի պատմության, մաս 3, Երևան, 1959. «Հայաստանի կոմունիստական պարտիայի պատմության ուրվագծեր», Երևան, 1958 (հեղ. Ա. Մնացականյան), նույնը. Երևան, 1963 (հեղ. Ե. Խալեյան, Վ. Հարարյան), Մեծ հոկտեմբերի դրոշի ներքո, Երևան, 1957. «Հայ ժողովրդի պատմություն», երրորդ մաս, ձեռնարկ միջնակարգ դպրոցի համար, Երևան, 1956 (հեղ. Ա. Մնացականյան), Х. Момджян, Сыны армянского народа в боях за советскую родину, Ереван, 1945.

[5] С. Харманд арян, Боевое содружество армянского народа с народ ми Советского Союза в Великой Отечественной войне, Ереван, 1955.

[6] Կ. Միրզախանյան, Հայաստանի կոմերիտմիությունը Հայրենական մեծ պատերազմի տարիներին, Երևան, 1956. Լ. Մարտիրոսյան, Հայ կանանց սխրագործությունները Հայրենական մեծ պատերազմի ռազմաճակատներում (1941—1945), Հայկական ՍՍՌ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1961։

[7] Ե. Խալեյան, Ա. Ի. Միկոյանի անվան պարտիզանական ջոկատի մարտական գործողությունները Ուկրաինայում, Հայկական ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1947, № 2. Т. С. Драмп ян, О деятельности армянской секции Компартии Франции. «Լենինյան ուղիով», 1964, № 11. Участие армянских коммунистов Южной и Центральной Франции в движении Сопротивления (1941—1944 гг.), Հայկական ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1964, № 11. Создание армянского национального фронта в Южной и Центральной Франции и его деятельность в 1941—1944 гг. «Երևանի պետ. համալսարանի ասպիրանտների գիտական աշխատությունների ժողովածու», Երևան, 1965. Деятельность армянской секции Компартии Франции в годы движения Сопротивления 1941—1944 гг. (Южная и Центральная Франция), Автореферат диссертации на соискание ученой степени кандидата исторических наук. Ереван, 1965. Э. М. Халеян. Участие сынов армянского народа в боях на Украине в 1941—1945 гг. — „Исторические связи и дружба украинского и армянского народов", Сборник. Ереван, 1961. Այդ շարքին է նվիրված նաև Ուկրաինական և Հայկական ՍՍՌ ԳԱ համատեղ գիտական սեսիայում Ր. Սլինկոյի կարդացած զեկուցումը. И. Слинко. Боевое содружество украинского и армянского народов в партизанской борьбе против фашистских оккупантов, տե՛ս նույն ժողովածուն, էջ 163—178. Ե. Խալեյան, Նյութեր Միսակ Մանուշյանի մասին, Հայկական ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1948, № 4։

[8] Միքայել Հակոբյան, Անհայտ կորած մարդիկ, Երևան, 1964։

հայ ռազմիկների քաջագործությունների մասին։ Այս աշխատությունը առաջինն է, որ լուսաբանում է հայ ռազմիկների ընդհատակյա պայքարի պատմությունը, «անհայտ կորածներին» հայտնի դարձնում։

Պատմագրությունը կապիտալ աշխատություններից և պաշտոնական ժամանակագրություններից բացի հենվում է նաև վավերագրերի ժողովածուների, հիշատակարանների, մեմուարների և այլ ժանդակ նյութերի վրա։ «Խիզախներ», «Հայ ժողովրդի զավակները Հայրենական պատերազմում» (1942), «Պսակ», «Սովետական Հայաստանի զավակները Լենինգրադի պաշտպան» (1946), «Հայ ժողովրդի խոսքը ռազմաճակատում գտնվող իր զավակներին» (1943), «Հայ ռազմիկների պատասխանը ժողովրդին» (1944) և մի շարք այլ ժողովածուներ ու բրոշյուրներ հուզիչ, ջերմ հայրենասիրությամբ տոգորված նյութեր են պարունակում անմոռանալի օրերի, հայ դյուցազունների սխրանքների մասին։ Աղբյուրագիտական օգտակար փաստեր, հուշապատումներ կան Ա. Մալխասյանի «Սովետական բանակի հայ գործիչները», Ս. Նալբանդյանի «Հայ թամանցիները», Գ. Ղուկասյանի «Պատերազմի ճամփաներով»[9] և այլ գործերում։ «Գիրք հերոսների մասին» ժողովածուն[10] պատմում է Սովետական Միության 100 հերոսների մասին, որոնցից 95-ը հայեր են, իսկ 5-ը՝ եղբայրական մյուս ժողովուրդների զավակներ, որոնք ծնվել և դաստիարակվել են Սովետական Հայաստանում։ Պատերազմի տարիներին և հետո, ինչպես նշեցինք, հրատարակվեցին մի շարք ժողովածուներ և բրոշյուրներ՝ նվիրված հայկական զորամասերի մարտական գործողություններին, ռազմաճակատում առավել աչքի ընկած հայ ռազմիկների քաջագործություններին։

Գիտա-պոպուլյար սերիայի գծով բրոշյուրներ են լույս տեսել Սովետական Միության հերոսներ Ջահան Կարախանյանի, Նելսոն Ստեփանյանի, Հունան Ավետիսյանի, ավիացիայի մարշալ Ս. Խուդյակովի (Արմենակ Խանփերյան), գեներալ-մայորներ Նվեր Սաֆարյանի, Սարգիս Մարտիրոսյանի, Ի. Գասպարյանի, գվարդիայի գեներալ-մայոր Ս. Կարապետյանի, գվարդիայի կապիտան Արամ Միրզոյանի, ավագ լեյտենանտ Պատրիկ Գազազյանի, Սովետական Միության հերոս Ղուկաս Մադոյանի, ավագ լեյտենանտ Սերգեյ Բուռնազյանի, Սովետական Միության հերոս, գեներալ-մայոր Ասքանազ Կարապետյանի, գնդապետ Մադաթյանի, Սովետական Միության հերոս, գվարդիայի լեյտենանտ Ռ. Հակոբյանի մասին։ Լույս են տեսել նաև Ք. Գրիգորյանի «Սովետական Միության հայ հերոսները Կովկասի պաշտպանության համար մղված մարտերում», Գ. Տեր-Գրիգորյանի «Ստալինգրադի հայ պաշտպանները», Ս. Թովմասյանի «Մի էջ Կովկասի հերոսական պաշտպանությունից», Կ. Կողմոյանի «Լենինական» բրոշյուրները։

Սովետահայ պատմագրությունը զգալի ուշադրություն է նվիրել Եվրոպայի և Ասիայի ժողովուրդների ազատագրական պայքարի մարքս-լենինյան լուսաբանությանը, պատերազմի տարիներին Սովետական Միության վարած արտաքին քաղաքականության հարցերին։ Հայրենական մեծ պատերազմում սովետական ժողովրդի տարած պատմական մեծ հաղթանակի 20-ամյակի օրերին սովետահայ պատմագրությունը հարստացավ նոր աշխատություններով, վավերագրերով և այլ նյութերով։

Բայց այս բոլորով հանդերձ, սովետահայ պատմագրությունը մեծ պարտք ունի. դեռ շատ բան կա անելու Հայրենական մեծ պատերազմում հայ ժողովրդի ցուցաբերած մասնակցությունը բազմակողմանիորեն ներկայացնելու, Հայաստանի բանվոր դասակարգի, կոլտնտեսային գյուղացիության, ժողովրդական ինտելիգենցիայի, ռազմաճակատի և թիկունքի մարտիկների սխրանքները փառաբանելու, հայկական դիվիզիաների, Հայաստանի կոմպարտիայի պատերազմական տարիների գործունեությունը լուսաբանելու ասպարեզում։

---

[9] Ա. Մալխասյան, Սովետական բանակի հայ գործիչները, Երևան, 1963, նույնը, 1965. Ս. Նալբանդյան, Հայ թամանցիները, Երևան, 1947. Նույնի Թամանցիներ, Երևան, 1961. Գ. Ղուկասյան, Պատերազմի ճամփաներով, Երևան, 1962։

[10] «Գիրք հերոսների մասին», Հայկական ՍՍՌ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1964, խմբագիրներ Ա. Մ. Հակոբյան, Ե. Մ. Խալեյան։